ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Վերապատրաստվող՝ դաստիարակ Աշխեն Յուրայի Խաչատրյան

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ԳՅՈՒՂԻ <<ԼՈՒՄՆԹԱԳ>>
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

ԳԼՈՒԽ 1

1.1 Նախադպրոցականի ուսուցման գործընթացին ներկայացվող ժամանակակից պահանջների արդյունավետությունը մանկապարտեզի ուսումնադաստիարակչական գործընթացում.....5

1.2 Փոխներգործուն ուսուցման մեթոդների արդյունավետությունը նախադպրոցական տարիքում 11

ԳԼՈՒԽ 2.

Ավագ նախադպրոցականի դպրոցական պատրաստության արդյունավետությունը մանկապարտեզում ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառման պայմաններում 16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....20

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հայտնի է, որ հասարակական զարգացումը էապես պայմանավորված է այն հանգամանքով, թե ինչպիսին է նրա ուսուցման և դաստիարակության դրվածքը: Անկախ նրանից, թե որտեղ են ապրում մերօրյա երեխաները, նրանց ամբողջ կյանքի ընթացքում հարկ է լինելու դիմակայել հասարարական, քաղաքական և միջավայրի փոփոխություններին, որոնք էապես ներազդում են աշխատաշուկայի վրա: Այսօր աշխարհով մեկ տեղի ունեցող արագընթաց փոփոխությունները կարևոր են դարձնում երեխաներին սեր ներարկումը ամբողջ կյանքում սովորելու հանդեպ: Երեխաներին ուսումնատենչ դարձնելու նպատակով մանկավարժությունն առաջարկում է նոր մոտեցումներ, որոնք կենսական են 21-րդ դարում ակնկալվող մարտահրավերները դիմակայելու իմաստով: Մանկավարժությունն ընդունում, գնահատում և քաջալերում է անձնային այն հատկանիշների ու կարողությունների ձևավորումը, որոնք անհրաժեշտ կլինեն երեխային փոփոխվող հասարակության ժամանակներում : Մասնավորապես.

- ✓ փոփոխություններն ընկալելու և դրանց արաձագանքելու,
- ✓ քննադատաբար մտածելու և ընտրություն կատարելու,
- ✓ խնդիրներ առաջադրելու և լուծելու,
- ✓ ստեղծագործաբար մտածելու և որոշումներ կայացնելու,
- ✓ մարդկանց նկատմամբ հոգատար և հանդուրժող լինելու:

Ժամանակակից մանկավարժության հարցադրումների իրականացման սկիզբը դրվում է նախադպրոցական տարիքում, հետևաբար, այսօր, առավել քան երբևէ կարևորվում են նախադպրոցահասակ երեխաներին հանրակրթության պահանջներին նախապատրաստելու խնդիրները: Դրանք են.

- ✓ յուրաքանչյուր նախադպրոցականի պատշաճ նախապատրաստումը դպրոցական ուսումնառությանը,
- ✓ բոլոր ավագ նախադպրոցականների դպրոցական ուսումնառության պատրաստության մեկնարկային հավասարության ապահովումը,
- ✓ երեխային դպրոցական ուսումնառությանը նախապատրաստելու տարատեսակ ձևերի մշակումը:

Ավագ նախադպրոցականի նախապատրաստումը դպրոցին հիմնականում ընթանում է նախադպրոցական ուսումնական հաստատություններում /ՆՈՒՀ-ում/: Բնականաբար, ժամանակակից մանկապարտեզների առջև դրվում են նոր պահանջներ, որոնք կոչված են ապահովելու յուրաքանչյուր ավագ նախադպրոցականի իմացական և ուսումնական կարողությունների ձևավորման լիարժեք ընթացք: Ելնելով ներկայիս մանկավարժական մոտեցումներից, արդեն կյանքի կոչված ծրագրերից և խնդիրներից, ժամանակակից նախադպրոցական կրթական հաստատություններում երեխայի դաստիարակության և ուսուցման հիմքում դրվում է այն մոտեցումը, համաձայն, որի ինտելեկտուալ զարգացած և սոցիալապես հասուն նախադպրոցականը, սովորաբար, ցանկանում է գնալ դպրոց, հոգեբանորեն պատրաստ է լինում հետագա ուսումնառությանը: Դպրոցական պատրաստությանը կարճ ժամանակում կարող են նպաստել մանկավաժական աշխատանքի նոր ձևերը, ուսուցման արդյունավետ մեթոդներն ու դրանց կից օգտագործվող բազմազան հնարները:

Նեկայումս նախադպրոցական դիդակտիկայում լայն տարածում են գտել ուսուցման գործնական մեթոդները՝ խաղային, խմբային ուսուցման, ինտերակտիվ: Ուսուցման փոխներգործուն կամ ինտերակտիվ մեթոդները համապատասխանում են անհատակողմնորոշիչ հաղորդակցման մոդելին և կարող են նպատակաուղղված ծառայել ոչ միայն ուսուցման գործընթացի արդյունավետությանը, այլև երեխայի նախապատրաստմանը դպրոցին:

Հետազոտության նպատակն է՝ վերլուծել և ներկայացնել ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառման արդյունավետությունը մանկապարտեզի ուսումնադաստիարակչական գործընթացում:

Հետազոտության խնդիրներն են՝

- Ուսումնասիրել մասնագիտական գրականությունը:
- Ներկայացնել նախադպրոցականի ուսուցման գործընթացին ներկայացվող ժամանակակից պահանջները:
- Գործնականում ապացուցել փոխներգործուն ուսուցման մեթոդների արդյունավետությունը նախադպրոցական տարիքում:

ԳԼՈՒԽ 1

1.1 Նախադպրոցականի ուսուցման գործընթացին ներկայացվող ժամանակակից պահանջների արդյունավետությունը մանկապարտեզի ուսումնադաստիարակչական գործընթացում

Ուսուցման կազամակերպման ժամանակակից ձևեր ու մեթոդներ ասելով, հասկանում ենք այնպիսիք, որոնք հիմնված են երեխաների զարգացման առանձնահատկությունների, իմացության, այն ըմբռնման վրա: Իմանալով երեխաների զարգացմանը բնորոշ առանձնահատկությունները՝ մանկավարժը նպաստում է աշխարհճանաչմանը: Ինչպես պնդում են մանկավարժներ Սիֆելդտը , Բրետեկամփը մանկավարժական կազմը պետք է հետևողական լինի այն տարբերությունների նկատմամբ, որոնք կան միևնույն տարիքի երեխաների հմտությունների և անհատական հետաքրքրությունների միջև:

Զարգացման ժամանակակից մեթոդներն ու ձևերն ընդգրկում են երեխաների հետաքրքրությունների առկա ճանաչողական մակարդակի և սոցիալական ու հուզական հասունության վրա հիմնված գործունեություն: Նման գործունեությունը խթանում է նախադպրոցականների բնական հետաքրքրությունները զգայական փորձառության հրճվանքը, ինչպես նաև սեփական մտքերն ուսումնասիրելու ցանկությունը: Ուսումնառության ժամանանակակից ձևերը, մեթոդները և մոտեցումները կառուցվում են այնպես, որպեսզի երեխային օգնեն պատասխանել իրենց սեփական հարցերին: Երբ երեխաներին հարցեր են առաջադրում հետաքրքրությունը, շահագրգռվածությունը և ուշադրությունը առաջ են գալիս ինքնաբերաբար: Մանկավարժի խնդիրն է գտնել այն ուղիները, որոնք օգնում են երեխաներին գտնել հարցերի պատասխանները՝ առանց անհարկի պարզունակեցնելու հարցի էությունը կամ երեխային տեղեկություններով ճնշելու: Ուսուցման գործընթացն իրականացվում է տարբեր մեթոդների օգնությամբ:

Փորձերի և փորձարարության դերն այսօրվա դիդակտիկայում անգնահատելի է: Փորձարարությունը երեխայի որոնողական գործունեության յուրահատուկ ձև է,

ներքին ակտիվության վառ դրսևորում: Այն պրոբլեմային ուսուցման հիմնական եղանակն է:

Մոդելավորումը համեմատաբար նոր մեթոդ է, որի հիմքում ընկած է ուսուցանվող նյութի ներկայացումը պայմանական նմուշի՝ մոդելի ձևով: Մոդելը ուսուցանվող օբյեկտի բոլոր հատկությունները ամփոփող պատկերն է՝ ներկայացված փոխարինման սկզբունքով: Օրինակ, խմբասենյակը փոխարինվում է սենյակի հատակագծի մոդելով: Կամ, հեքիաթը ներկայացվում է սխեմատիկ նկարի, պատկերագրի ձևով:

Նախադպրոցականի ուսուցման գործընթացում օգտագործվում են մոդելների հետևյալ ձևերը.

- առարկայական մոդելներ՝ ուսումնասիրվող առարկան պատկերող նկար կամ նմուշ-խաղալիք,
- առարկայասխեմատիկ մոդելներ՝ ուսումնասիրվող երևույթը բնութագրող ընդհանրացված պատկեր կամ սխեմա /օրինակ, բնության օրագիրը, ուր բնության երևույթներն արտահայտվում են սիմվոլներով/,
- վերացական մոդելներ՝ սխեմաներ, դիագրամներ, պիկտոգրամներ /սխեմատիկ նկարների շարք/: Նման օրինակ է հեքիաթի մոդելավորումը, այն ընթերցվում է և բաժանվում տրամաբանական մասերի, դրանք երեխան վերնագրում է, որից հետո փորձում է նկարել յուրաքանչյուր մասը՝ պատկերելով մասի ընդհանուր իմաստը:

Մոդելավորման մեթոդը ուսուցման հեռանկարային մեթոդներից է:

Ժամանակակից նախադպրոցական դիդակտիկայում իրենց հաստատուն տեղն են գրավել ակտիվ ուսուցման մեթոդները, որոնք հայտնի են որպես փոխներգործուն կամ ինտերակտիվ մեթոդներ:

Ակտիվ ուսուցման մեթոդները նպաստում են ազատ մտածելու, համարձակ կարծիք հայտնելու կարողությունների և տարածականության զարգացմանը, իմացության գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը: Դրանք խմբային մտավոր աշխատանքի եղանակներն են՝ ուղղված համատեղ մտորումների և

որոնումների քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը:

Ուսուցման փոխներգործման մեթոդները համապատասխանում են անհատակողմնորոշիչ ուսուցման սկզբունքներին և կարող են նպատակաուղղված ծառայել նշված ուսուցման խնդիրների լուծմանը:

Ինտերակտիվ նշանակում է փոխադարձ ներգործել զրույցի, երկխոսության միջոցով: Այսինքն, ինտերակտիվ ուսուցումն առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով: [2-183էջ]

Inter - փոխադարձ

akt - գործողություն

Ինտերակտիվը բացառում է որևէ մեկի առաջնայնությունը, գերակայությունը, ինչպես նաև մի տեսակի գերակշռությունը մյուսների նկատմամբ: Ուսուցման ժամանակակից մեթոդիկա է համարվում ԽԻԿ համակարգը:

ԽԻԿ-ը ժամանակակից ուսուցման մեթոդների համակարգ է, որը ուսուցման գործընթացը բաժանում է հետևյալ փուլերի՝

- ✓ Խթանում
- ✓ Իմաստի ընկալում
- ✓ Կշռադատում

Բնութագրելով յուրաքանչյուր փուլում մանկավարժի անելիքը՝ ԽԻԿ-ն առաջ է քաշում մի շարք մեթոդներ՝ տվյալ փուլին անհրաժեշտ արդյունքի հասնելու համար: Խթանման փուլի խնդիրներն են՝

- բացահայտել երեխաների գիտելիքները նոր նյութի վերաբերյալ,
- ակտիվացնել երեխաներին նրանց քննարկվելիք նյութի մեջ ներգրավելով,
- առաջացնել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում:

Խթանման փուլում կիրառելի են հետևյալ մեթոդները ՝ մտագրոհի, խմբավորման, պրիզմայի, մտածիր-զույգերով, ձնագնդու:

Իմաստի ընկալման փուլի խնդիրներն են՝

- ✓ հետաքրքրության պահպանումը,
- ✓ տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը,

- ✓ նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու նյութի իմաստի ընկալման փուլում՝ T-աձև աղյուսակ, գաղափարների քարտեզ, Վենի դիագրամ, փոխներգործուն նշանների համակարգ, խորանարդում, խճանկար, երեք բանալի և մեկ կողպեք, շրջագայություն պատկերասրահում:

Կշռադատման փուլի խնդիրներն են՝ ստացած տեղեկատվությունն իր բառերով և ձևակերպումներով արտահայտելու կարողության ձևավորումը, նոր գիտելիքների միաձուլումը ունեցածին և դրանց վերլուծությունը:

Քառաբաժան մեթոդ: Այս մեթոդը, բավականին հետաքրքիր է, հարմար է նախադպրոցականների հետ աշխատելիս: Այն կարելի է կիրառել մեծ կամ փոքր խմբերով: Մտքերն անհրաժեշտ է դասակարգել համաձայն չորս բաժինների խորագրերի: Բաժինների հանձնարարությունները պատահական չեն ընտրվում, դրանք համապատասխանում են նյութի ընկալման և մտքի զարգացման ընթացքին

Քառաբաժան մեթոդի աղյուսակը ցույց է տրվում էլեկտրոնային գրատախտակի վրա: Օրինակ, հեքիաթի վերլուծության ընթացքում կարելի է առաջարկել հետևյալը:

Առաջին վանդակում՝ Ի՞նչ էիք տեսնում հեքիաթը կարդալիս / հերոսներին, հեքիաթային միջավայր կամ ոչինչ/:

Երկրորդ վանդակում՝ Ի՞նչ էիք զգում հեքիաթը կարդալիս / ուրախություն, տխրություն, զարմանք, վախ/:

Տրված պատասխաններից մեկը մուտքագրում են և այն ներկում կանաչ գույնով:

Երրորդ վանդակում ՝ Ի՞նչ խորհուրդ կտաս գլխավոր հերոսին /օրինակներ/:

Չորրորդ վանդակում՝ Ինչպե՞ս կվերնագրես հեքիաթը: Հորինի՛ր նոր վերնագիր:

Դերախաղ մեթոդը նույնպես կիրառվում է մանկապարտեզներում, կիրառման համար դաստիարակից պահանջվում է ստեղծագործական մոտեցում և համապատասխան միջավայրի ստեղծում՝ շիրմա, բեմ, հանդիսատես և այլն: Դերախաղը կարելի է անցկացնել առանձին պարապմունքի ժամանակ: Այս մեթոդի շրջանակներում կարելի է նաև մնջախաղ անցկացնել:

Ջնագնդի մեթոդն, անկասկած, կիրառելի է մանկապարտեզներում, այն հետապնդում է հետևյալ նպատակները՝ կարծիքների փոխանակում, հիշողության և ուշադրության կենտրոնացում, բառապաշարի հարստացում: Մանկավարժը կամ որևէ երեխա մի արտահայտություն կամ նախադասություն է ասում, մյուսը պետք է կրկնի նախորդի ասածը և ավելացնի իր տարբերակն, ըստ առաջարկվող թեմայի: Մյուսը արդեն կրկնում է նախորդ երկուսի ասածը և ավելացնում իրենը: Այսպիսով վերջին երեխան կրկնում է ամբողջ խմբի ասածը: Այն երեխան, ում վրա շղթան կոտրվում է, դուրս է մնում խաղից:

Մտագրոհ մեթոդի կիրառման ընթացքում առաջարկվում են այնպիսի գործողություններ, որոնք թույլ կտան ակտիվացնել երեխայի իմացածը: Նոր նյութի յուրացման հաջողությունը մեծապես պայմանավորված է այն գիտելիքներով, որոնք երեխաներն արդեն ունեն:

ԳՈՒՍ մեթոդը նախակրթարաններում կիրառվում է ախտորոշիչ նպատակներով: Երեխաները պարապմունքից առաջ և հետո հաջորդաբար պատասխանում են երեք հետևյալ հարցերին՝

- ✓ Ի՞նչ գիտենք:
- ✓ Ի՞նչ ենք ուզում իմանալ:
- ✓ Ի՞նչ իմացանք:

Մանկավարժն առաջարկում է թեման և հարցնում է երեխաներին <Ի՞նչ գիտեք>: Երբ երեխաներն արձագանքում են , մանկավարժը նրանց պատասխանները գրում է թղթի վրա, որպեսզի բոլորը կարողանան տեսնել: Անհրաժեշտ է նշել յուրաքանչյուր երեխայրի անունը նրա մեկնաբանության կողքին: Որից հետո տրվում է երկրորդ հարցը. <<Ի՞նչ կուզենայիք իմանալ>>: Եվ կրկին անհրաժեշտ է գրառել պատասխանները: Այնուհետև մանկավարժը հարցնում է <<Ի՞նչպես կարելի է գտնել ձեր հարցերի պատասխանները>>: Տեղեկություններ ստանալու համար կարելի է հարցեր տալ ծնողներին, դաստիարակին, փորձ կատարել:

ԳՈՒՍ -ի երրորդ բաղադրիչը <<Ի՞նչ սովորեցինք>> հարցն է, որի օգնությամբ երեխան ինքն է բացահայտում այդ օրվա սովորածը:

Փոխներգործուն մեթոդներն ունեն իրենց բնորոշ առանձնահատկություններ, որոնք հնարավորություն են տալիս ուսուցման գործընթացը կազմակերպելու

անհատականացված: Անհատականացումը նշանակում է, որ խմբասենյակի ուսումնական ժամանակացույցը հարմարեցված է յուրաքանչյուր երեխայի աշխատանքի և հանգստի պահանջմունքներին: Անհատականացումը յուրաքանչյուր երեխայի ուժեղ և թույլ կողմերի համապատասխանեցնում է ուսումնական գործունեությանը: Անհատականացված ուսուցման համար շատ կարևոր է , խմբասենյակի կահավորանքը, նյութերը, դասավորությունը խթանեն յուրաքանչյուր երեխայի աճը, իսկ ընտրված աշխատաձևերը համապաստասխանեն յուրաքանչյուր երեխայի պահանջմունքներին: Անհատականացումը նաև ենթադրում է, որ մանկավարժը ունի մտահղանալու այնպիսի հանձնարարություններ, որոնք պետք է յուրաքանչյուր երեխայի մեջ առաջ բերեն հաջողության հասնելու և դիմադրություն հաղթահարելու զգացում: Խմբային պարապմունքները մեծամասամբ մասնակցում են փոքր խմբերով, առավելագույնի հասցնելու համար անհատականացման չափը: Դասասենյակում աշխատանքային կենտրոնների ստեղծումը թույլ է տալիս երեխաներին անհատականացնել իրենց աշխատանքները՝ հիմնվելով հետաքրքրությունների և հմտությունների վրա: Ստեղծելով աշխատանքային կենտրոններ ՝ արվեստի, խաղադեկորների, խոհարարության, դերային խաղի, գրաճանաչության, մաթեմատիկայի /մանիպուլյատիվներ/, երաժշտության, խրախուսվում են երեխայի ստեղծագործական ինքնուրուությունը, փորձառությունը, նախաձեռնողականությունը:

Փոխներգործուն մեթոդների առանձնահատկություններից է երեխայի <u>հաղորդակցման ունակությունների ձևավորումը</u>:

Փոխներգործուն մեթոդների առանձնահատկություններից է երեխայի <u>իմացական գործընթացի կազմակերպումը</u> գործունեության տարբեր ձևերում:

Պարապմունքները կազմակերպելիս անպայման նյութը պետք է համապատասխանեցնել երեխայի զարգացմանը, ունակություններին, որը միաժամանակ խթանի նրանց աշխատասիրության, հետաքրքրության և ընկալման մակարդակի բարձրացմանը: Աշխատելով երեխաների հետ խաղադեկորներով՝ երևակայական կամ ճանաչելի պատկերներ կազմելով, երեխաները շատ բան են սովորում, զարգանում են թվաբանական հմտությունները, ընդլայնվում են

մտածողական հմտությունները, ձևավորվում են սոցիալական հմտությունները, հանդես է բերվում ստեղծագործական մոտեցում և զարգանում է կենտրոնանալու ունակությունը: Երեխաները կարողանալով համեմատել և հետազոտել երևույթներըև առարկաները ՝ գտնում են տարբեր խնդիրների լուծումներ, որն էլ նպաստում է հասկանալու իրադարձությունների հաջորդականությունը և պարզ պատճառհետևանքային կապերը, կատարելու քննադատական վերլուծություն:

Երեխաների ճանաչողական հետաքրքրությունների զարգացումն յուրաքանչյուր երեխայի հնարավորություն է տալիս դառնալու նոր աշխարհի լիարժեք և գործուն քաղաքացի: Մերօրյա երեխաների համար կենսական անհրաժեշտություն է ողջ կյանքում սովորելու հանդեպ պատրաստականության ձևավորումը:

Գործունեության բոլոր ձևերում օգտագործվող նյութերը դրդում են երեխաներին օգտագործելու իրենց զգայարանները, փորձարարության հետազոտման և հայտնաբերման միջոցով: Երեխաները փորձարկում են գաղափարներ և իմացություններ ձեռք բերում իրենց անհատական ճանապարհներով: Ահա այս կերպ են զարգացնում երեխաների խնդիրներ որոնելու և լուծելու, ընտրություն կայացնելու, վերլուծաբար մտածելու ընդունակությունները:

Այդուհանդերձ, չկան փոխներգործուն մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր: Ցանկացած խումբ, պարապմունք եզակի է, անկրկնելի: Դաստիարաակի խնդիրն է՝ ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել եզակի իրավիճակին:

1.2 Փոխներգործուն ուսուցման մեթոդների արդյունավետությունը նախադպրոցական տարիքում

Ժամանակակից նախադպրոցական դիդակտիկայում իրենց հաստատուն տեղն են աստիճանաբար գրավում ուսուցման փոխներգործուն կամ ինտերակտիվ մեթոդները: Ուսուցման փոխներգործուն մեթոդները նպաստում են ազատ մտածելու, համարձակ կարծիք հայտնելու կարողությունների և տարածականության զարգացմանը, իմացության գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը: Դրանք խմբային մտավոր աշխատանքի եղանակներն են՝ ուղղված համատեղ մտորումների և որոնումների քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ուրվագծմանը:

Այս մեթոդները համապատասխանում են անհատակողմնորոշիչ ուսուցման սկզբունքներին և կարող են նպատակաուղղված ծառայել ուսուցման խնդիրների լուծմանը նախադպրոցական տարիքում: Ինտերակտիվ նշանակում է փոխներգործել երկխոսության մեջ: Այսինքն, իներակտիվ ուսուցումը առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով: Ինտերակտիվը բացառում է որևէ մեկի առաջնայնությունը, գերակայունությունը, ինչպես նաև մի տեսակի գերակշռությունը մյուսների նկատմամբ: Սովորողների համար համատեղ գործունեությունն անհրաժեշտ է ոչ միայն ինֆորմացիայի փոխանակման և փորձի ձեռքբերման համար: Գլխավորը կայանում է նրանում, որ երեխան ուրիշ մարդուն նայում է ինչպես հայելու մեջ և նրան համեմատում է իր հետ: Ինտերակտիվ ուսուցումը ՝ համատեղ ուսումնական գործունեության արդյունքում, խթանում է ստեղծագործական կարողությունների զարգացումը:

Ինտերակտիվ ուսուցման սկզբունքներն են.

1. փոխազդեցության, փոխուսուցման,
2. երկկողմ ակտրվության,
3. համագործակցության,
4. ինքնարտահայտման խրախուսման,
5. հետադարձ կապի:

Փոխներգորգուն մեթոդների կիրառումը նպաստում է.

- ✓ երեխայի իմացական գործընթացների զարգացմանը,
- ✓ ճանաչողական հետաքրքրությունների բացահայտմանը,
- ✓ համագործակցային կարողությունների դրսևորմանը,
- ✓ անհատական առանձնահատկությունների բացահայտմանը,
- ✓ հաղորդակցական ունակությունների ձևավորմանը,
- ✓ տրամաբանական մտածողության զարգացմանը,
- ✓ վերլուծական կարողությունների ձևավորմանը:

Ուսուցման Ինտերակտիվ մեթոդների կիրառման կանոնները:

- Պատրաստել խմբասենյակն աշխատանքը սկսելուց առաջ

- Երեխաների նստելու դիրքը կամ աթոռների դասավորվածությունը շրջանաձև կամ եղննաձև է:
- Պարապմունքի պարագաները նախապատրաստել նախօրոք:
- Աշխատանքում ներգրավել բոլոր երեխաներին:
- Հոգալ երեխաների հոգեբանական հարմարավետության մասին: Երեխաների կաշկանդվածությունը, վարքը ճնշող ձևերը հաղթահարելու համար անչափ կարևոր է նրանց խրախուսելը՝ հնարավորություն ընձեռելով, որ նրանք լինեն ազատ և ուրախ :
- Ցանկալի չեն երեխաների մեծաքանակ խմբերը: Եթե խումբը մեծաքանակ է, ապա աշխատանքը արդյունավետ է կազմակերպել փոքր խմբերով /ենթախմբերով/, որ բոլորը մասնակցելու հնարավրություն ունենան:
- Կիրառել փոքր խմբերի բաժանման որոշակի սկզբունքներ՝ կամավորության, պատահական ընտրության, ըստ հետաքրքրությունների և այլն:
- Հետևել ժամանակին:

Մանկապարտեզում կիրառվող փոխգործուն մեթոդներից են նաև

Մտքերի տարափ

Զրույց-քննարկում, բանավեճ

Աշխատանք ենթախմբերով

Հարցեր ու հարցադրումներ

Իրավիճակի վերլուծություն

Դերային խաղ և այլն:

Ինտերակտիվ մեթոդներից ամենատարածվածը և ամենահաճախակի կիրառվողը՝ <<Մտագրոհն>> է, այն կարելի է ծառայեցնել ամենատարբեր նպատակների՝ թեմայի կայուն յուրացման, բառապաշարի հարստացման և ակտիվացման, ստեղծագործական բազմաթիվ աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև լեզվական գիտելիքների յուրացմանն ու կիրառմանը: Հնարավոր է այն դարձել մշտապես աշխատող մի գործիք: Մտագրոհ կամ մտքերի տարափ մեթոդի հիմնական նպատակը մտքերի կուտակման, բացահայտման, արտահայտման հնարավորության ստեղծումն է: Դրա հիմքում ընկած է << Միտքը նոր միտք է ծնում>> կողմնորոշումը:

Մտագրոհը կիրառվում է հիմնականում պարապմունքի խթանման փուլում, երբ երեխաները նախապատրաստվում են նոր նյութի յուրացմանը: Այն կարծես, կապող օղակ է հանդիսանում ուսումնասիրվող երևույթի / առարկայի, թեմայի և այլն/ մասին սողորողների արդեն ունեցած և ձեռք բերվող գիտելիքների միջև: Օրինակ ՝Գարուն՝ թեմայից առաջ գրատախտակին ամրացվում են գույնզգույն ծաղիկների պատկերներով պաստառներ: Դաստիարակը հարցնում է, թե ինչ գիտեն գարնան մասին, ինչպես է բնութագրվում այն: Ապա թույլ է տալիս զույգերով մտածել և ասել իմացածը: Այնուհետև գրատախտակին գրվում են բոլոր մտքերը կամ փակցվում համապատասխան նկարներ/ ճիշտ, թե սխալ/: Գարնան մասին բավականին տեղեկություններ հաղորդելուց հետո, պարապմունքի վերջում, բացառման մեթոդով, դաստիարակը ողջունում է միայն ճիշտ պատասխանները: Մտագրոհը նպաստում է երեխաների ստեղծագործական մտածողության զարգացմանը:

<<Գարուն>> թեմայի ուսումնասիրման ընթացում մտագրոհ մեթոդի կիրառմամբ յուրաքանչյուր նյութի համար ստեղծված պաստառները անընդհատ գտնվում են երեխաների տեսադաշտում: Դրանք իբրև ուսումնական նյութեր, ստեղծվում են նրանց իսկ անմիջական մասնակցությամբ, բայց ամենակարևորն այն է, որ դրանք ամպայման գործածվում են պարապմունքների ժամանակ: Ընդ որում , այդ նյութերը հրաշալի միջոց կարող են դառնալ ՝Գարուն՝ թեմայի ամփոփման համար:

Զրույց-քննարկումն այն մեթոդն է, որը նպաստում է երեխաների մտքերի ինքնուրույն արտահայտմանը, ձեռք բերած գիտելիքների դրսևորմանը, վերլուծական մտածողության զարգացմանը: Անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ մթնոլորտ՝ նախապես որոշելով զրույցի թեման և անկնկալվող հարցերը: Օրինակ, նախընտրելի են հետևյալ թեմաները՝ «Ես ուզում են դպրոց գնալ», «Ինչու եմ սիրում կենդանիրների», «Իմ ընտանիքի անդամները», «Տիկնիկն իմ կյանքում» և այլն:

Մշտապես օգտագործում եմ պարապմունքների ժամանակ համագործակցության տարբեր ձևեր, որոնք շատ սիրում են երեխաները և բավականին արդյունավետ աշխատանք է ստացվում: Ներկայացնեմ պարապմունքների ժամանակ կիրավող համագործակցության մի քանի ձև.

<<Հեքիաթի բեմականացում>>: Պարապմունքի ժամանակ երեխաներըմիասին նախապես ընտրում են հերոսներին, բաժանում դերերը և համագործակցելով դաստիարակի հետ՝ որպես հեղինակի, կատարում դրանք: Երեխաների մի մասը մասնակցում է հանդիսատեսի դերում:

<<Ճանապարհորդություն նավով>>: Պարապմունքին երեխաները միասին կառուցում են նավը, որոշում այն առարկաներն ու իրերը, որոնք պետք է վերցնեն իրենց հետ: Միմյանց օգնելով՝ դրանք տեղավորում են նավի մեջ: Այդ ընթացքում նավի ու նավարկության վերաբերյալ բազմաթիվ հարցեր են տալիս դաստիարակին:

<<Շարունակիր կիսատ թողած պատմությունը>>: Պարպմունքի ընթացքում դաստիարակը կիսատ թողնելով սկսած պատմությունը, առաջարկում է երեխաներին այն շարունակել և ավարտել: Երեխաները մտածում են, սկսում են միմյանց հարցեր տալ, քննարկել պատասխանները, համաձայնության գալ և վերջապես որոշում են, թե ինչպես են շարունակելու և ավարտելու պատմությունը:

- ինքնուրույնություն,
- ուսումնական և սոցիալական հմտություններ,
- համագործակցության և փոխօգնության պահանջ,
- վարքի նորմեր:

Խաղի շնորհիվ ակտիվանում է երեխաների հուզական աշխարհը, զարգանում է երևակայությունը, նա սովորում է հաղթահարել կյանքի դժվարին իրավիճակները: Այսպիսով համատեղ ուսումնական գործունեությունն ու խաղը երեխաների մեջ դաստիարակում են այնպիսի հատկանիշներ, որոնք շատ կարևոր են նախադպրոցական երեխային դպրոցի նախաշեմին: Խաղը երեխաների մեջ ձևավորում է՝

- ✓ աշխատասիրություն և նպատակասլացություն,
- ✓ կարգապահություն և կազմակերպվածություն,
- ✓ ընկերասիրություն և հոգատարություն,
- ✓ վճռականություն,
- ✓ պատասխանատվության զգացում:

Այս հատկանիշները անհրաժեշտ են երեխաներին դպրոցական ուսումնառության ժամանակ:

ԳԼՈՒԽ 2

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

Ավագ նախադպրոցականի դպրոցական պատրաստության արդյունավետությունը մանկապարտեզում ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառման պայմաններում

Տասներկուամյա կրթական համակարգին անցնելու կապակցությամբ առավել կարևորվում է 5-6 տարեկան երեխաների դպրոցին նախապատրաստվելու խնդիրը: Երեխաներին դպրոցական ուսուցման պատրաստելը, դպրոցական կյանքին հաջողությամբ հարմարվելը ուսումնական գործունեության սկզբնական ձևերին տիրապետելը կարևոր պայման է: Դպրոցին նախախատրաստվել նշանակում է հատուկ մանկավարժական աշխատանք կատարել 5-6 տարեկան երեխաների զարգացման և կրթական հիմնական նպատակներին համապատասխան ընտրված՝ ընկալման, ըմբռնման և յուրացման համար նախատեսված գիտելիքների, կարողությունների և տարրական բարոյական արժեհամակարգի ձևավորման ուղղությամբ: Այդ նպատակով հետազոտություն եմ կատարել մեր մանկապարտեզի ավագ 1-ին խմբում, որտեղ հատուկ ընտրել և կիրառել եմ համապատասխան փոխներգործուն մեթոդներ ուսումնական գործընթացում, ապա արդյունքները համեմատել եմ մյուս ավագ խմբի վերջնարդյունքների հետ:

Հետազոտության նպատակը, խնդիրները, մեթոդները

Փորձարարական աշխատանքների նպատակն է՝ բացահայտել մանկապարտեզ հաճախող 5-6 տարեկան ավագ խմբի երեխաների զարգացման և դպրոցին պատրաստ լինելու աստիճանը, մշակել ինտերակտիվ պարապմունքների շարք՝ ուղղված նրանց դպրոցական պատրաստությունն ապահովելու համար: Ինտերակտիվ ուսուցման և համագործակցային դաստիարակության եղանակներով նպաստել երեխայի ակտիվ մասնակցությանը ուսումնառության գործընթացին: Բարձրացնել երեխայի ազատության և ինքնուրույնության աստիճանը, զարգացնել տրամաբանական մտածողությունը:

Հետազոտական աշխատանքները կազմակերպելիս առաջնորդվել ենք այն վարկածով, որ ուսուցման փոխներգործուն մեթոդները կարող են նպաստել

երեխաների ինչպես ինտելեկտուալ, այնպես էլ սոցիալ-անձնային պատրաստվածությանը դպրոցական ուսումնառությանը: Ենթադրում ենք, որ ինտերակտիվ մեթոդների կիրառման դեպքում մանկապարտեզում մանկավարժական գործընթացը կարճաժամկետ պայմաններում կլինի ավելիարդյունավետ:

Հետազոտական աշխատանքների կատարման ընթացքում մեր առջև դրել ենք հետևյալ խնդրիները՝

- ապահովել երեխայի ակտիվ մասնակցությունը ուսումնառության գործընթացին՝ ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառման միջոցով,
- հաստատել երեխաների հետ երկխոսություն և համագործակցություն,
- ստեղծել փոխըմբռնման մթնոլորտ՝ ուսուցումը կառուցելով երեխայի նախասիրությունների և հետաքրքրությունների ուսումնասիրությունների և հաշվառման հիման վրա:

Հետազոտությանն ընդգրկվել են Արտաշատ համայնքի Վերին Արտաշատ գյուղի<<Լուսնթագ>> մանկապարտեզի ավագ խմբի 30 երեխա: Հետազոտական աշխատանքներն ընթացել են երեք փուլով՝ արձանագրող, փաստարկող, հիմնական /զարգացնող/, ստուգիչ:

Արձանագրող փուլում ուսումնասիրել ենք ավագ խմբի երեխաների դպրոցին պատրաստվածության աստիճանը տվյալ ժամանակահատվածում:

Զարգացնող (հիմնական) փուլում կիրառվել են հետևյալ ինտերակտիվ մեթոդները՝ մտագրոհ, բանավեճ, դերային խաղ, զրույց, հարցեր-հարցադրումներ, աշխատանք զույգերով, ձնագնդի, քառաբաժան, ԳՈՒՍ, որոնք ուղղված են հասունացնելու նախադպրոցական տարիքի երեխաների դպրոցական պատրաստության մակարդակը:

Ստուգիչ փուլում ներկայացված է նպատակադրված մանկավարժական աշխատանքից հետո ստացված արդյունքների համեմատությունն ու վերլուծությունը: Նպատակն է եղել գնահատել ավագ նախադպրոցական տարիքի երեխաների հոգեբանական պատրաստվածությունը դպրոցին: Այդ նպատակով կազմել ենք թեստ,

որով փորձել ենք հասկանալու երեխաների դպրոցին պատրաստվածության հոգեբանական մի քանի բաղադրիչներ:

ա/ հիշողությամբ նկարել են երեխաները զարուն

բ/ արտանկարել երկու տպագիր տառ

գ/ արտանկարել կետերի խումբ:

Առաջադրանքների հիմքում այն մտայնությունն է, որ դպրոց գնացող երեխան պետք է հասուն լինի թե՛ մտավոր, թե՛ հուզական, թե՛ սոցիալական առումներով: Թեստի միջոցով ստացված տվյալները իհարկե բավական չեն վերջնական ախտորոշման համար: Այն տալիս է <<հոգեբանական տեղեկույթ դպրոցական հասունության մասին >> ինչը կարևոր դեր ունի երեխաներին դպրոց ընդունելիս :

Արդյունքների հաշվարկումը

Արդյունքները վերլուծեցինք հնգանիշ համակարգով <<1>> միավորը ամենաբարձրն է, <<5>> միավորը ամենացածրն է: Արդյունքների հաշվարկման ժամանակ հաշվի առանք նաև երեխաների սեռը: Ստացվեց միջին արդյունք, որը այնքան էլ գոհացուցիչ չէր:

40% ը- դպրոցական պատրաստության բարձր աստիճան

50%ը- դպրոցական պատրաստության միջին աստիճան

10%ը- դպրոցական պատրաստության ցածր աստիճան

Ուսումնասիրվող երեխաների սոցիալ-անձնային պատրաստությունը նույնպես ցածր մակարդակի էր: Մենք որոշեցինք երեխաներին դիտարկելով համատեղ գործունեության ընթացքում: Մանկապարտեզ հաճախող երեխաների համագործակցային կարողությունները կամ բացակայում էին / երեխաների մեծ մասը չուներ մյուսների հետ խաղալու, համատեղ գործելու ցանկություն/ կամ դրսևորվում էին տարրերային եղանակով, հիմնականում, մանկավարժի հորդորներից հետո: Հասակակիցների հետ հաղորդակցման ընթացքում արձանագրել ենք բազմաթիվ դժվարություններ, որոնք նույնպես խոսում են երեխաների սոցիալականացման խնդիրների մասին:

Հետազոտության հիմնական փուլի կազմակերպման առաձնահատկությունները, մեթոդական հանձնարարականները: Հետազոտության ձևավորող փուլի նպատակն է մշակել տարատեսակ պարապմունքներ՝

փոխներգործուն մեթոդների կիրառմամբ, որոնք կնպաստեն երեխաների ինտելեկտուալ և սոցիալ-անձնային պատրաստության աստիճանի բարձրացմանը դպրոց հաճախելու շեմին: Մշակված և կիրառված համալիր պարապմունքների ընթացքում փորձել ենք ձևավորել հետևյալ հատկանիշներն ու կարողությունները.

1. հաղորդակցում հասակակիցների հետ,
2. ինքնուրույն մտքերը արտահայտելու կարողություն,
3. շփման և երկխոսության հմտություններ,
4. ինքնուրույնություն, նախաձեռնողականություն:

Հետազոտության ստուգիչ փուլի արդյունքների համեմատական վերլուծությունը

Ստուգիչ փուլում՝ փոխներգործուն մեթոդներով իրականացված պարապմունքների արդյունավետությունը ճշտելու նպատակով նորից անցկացրեցինք թեստը, ըստ որի՝ ստացանք ավելի բարձր արդյունքներ: Երեխաները առաջադրանքները կատարեցի ավելի ուշադիր ,ստացան նկարի ամբողջական պատկերներ,ավարտուն տեսքով,տպագիր տառերի արտանկարման ժամանակ ստացանք ավելի բարձր արդյունքներ,կետախմբերով աշխատանքը ավելի համաչափ և հավասար ստցվեց և դարձյալ բարձր արդյունքներ ստացվեց:

Այսպիսով, ևս մեկ անգամ ապացուցվեց, թե որքան արդյունավետ են փոխներգործուն մեթոդներով կազմակերպվող պարապմունքները:

Կազմակերպված պարապմունքների ժամանակ երեխաները ցուցաբերում էին ինքնուրույնություն և ակտիվություն, հիմնականում կարողանում էին անմիջապես կենտրոնանալ, պատասխանել հարցերին,արագ ընկալում էին առաջադրանքները: Ինտերակտիվ մեթոդների կիրառումը նպաստեց նաև հասակակիցների հետ հարաբերություններիի բարելավմանը: Որքան բարձր էին երեխայի համատեղ գործելու կարողությունները, այնքան բազմազան և կայուն էին նրա հարաբերությունները հասակակիցների հետ: Ստուգիչ փուլի ընթացքում մեր կատարած արձանագրումներից կարելի է ասել, որ հետազոտության մեջ ընդգրկված 30 երեխաներից 18-ը շատ ակտիվ մասնակցություն ունեին, պատասխանում էին առանց մտածելու, հիմնականում տալով ճիշտ պատասխաններ, թվով 7 երեխա, ունեն միջին մակարդակի արդյունքներ և միայն 5-ը դրսևորեցին ցածր մակարդակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, կատարված հետազոտությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումները:

- Ուսումնասիրելով մանկապարտեզ հաճախող երեխաների ինտելեկտուալ զարգացման, համագործակցային կարողությունների, ինքնուրույնության և ազատության դրսևորման աստիճանը, եկանք այն եզրահանգման, որ նպատակաուղղված ուսումնադաստիարակչական գործունեությունը բերում է ցանկալի արդյունքի:
- Բացահայտեցինք, որ ընտրելով և կիրառելով ուսուցման մի շարք փոխներգործուն մեթոդներ ամենօրյա պարապմունքներում, կարող ենք զարգացնել խոսքի և լեզվական հմտություններ, ձևավորել սոցիալական և հուզական կարողություններ, դաստիարակել բարոյակամային հատկություններ:
- Մշակելով և իրականացնելով ավագ նախադպրոցականի փոխներգործուն ուսուցման մեթոդիկա, փորձեցինք առաջացնել կայուն հետաքրքրություն նորանոր գիտելիքներ ձեռքբերելու, հետևաբար և դպրոցական ուսումնառության հանդեպ:
- Կարևորելով հասակակիցների հետ համատեղ գործունեության դերը դպրոցական կյանքին և պահանջներին հարմարվելու գործում, եկանք այն համոզման, որ երեխաները համագործակցում են այն դեպքում, երբ մասնակցում են սեփական ուսումնառության կազմակերպմանը՝ գործունեության նպատակների սահմանման, հետաքրքրությունների միավորման և դրական արդյունքի ակնկալման միջոցով:

  Փորձարարական հետազոտությունը ցույց տվեց, որ փոխներգործուն մեթոդներով կազմակերպվող համալիր պարապմունքներն արդյունավետ են, քանի որ, այդ պարապմունքների ընթացքում երեխաների հետաքրքրասիրությունը, շահագրգռվածությունը առաջ էին գալիս ինքնաբերաբար և հանգեցնում մտավոր ակտիվության և ինքնուրույնության: Միաժամանակ, ձեռք էին բերվում սոցիալական կարողություններ և կարևոր անձնային հատկություններ: Դպրոցամուտը մեծ քայլ է երեխայի համար:

Օգնելով նախադպրոցականին լավ սկսել իր դպրոցական կյանքն ու ուսումնառությունը, ապահովում ենք ոչ միայն նրա դպրոցական կրթության հաջող մեկնարկը, այլև հետագայի բոլոր բնագավառներում հաջողակ և կարող լինելու պատրաստակամությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մարության Ս.Ա., Դալլաքյան Ա.Մ.,<<Նախադպրոցական մանկավարժություն>> ,Երևան 2005., 287էջ:
2. Հասմիկ Միտոյան, Լալա Սմբատյան <<Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար>> Երևան 2010թ.,223էջ:
3. Հարությունյան Հ.Ս. <<Խաղալով սովորենք մաթեմատիկան>> Ուսումնական ձեռնարկ , Երևան 2003թ.,95էջ:
4. Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, /5-6 տարեկանների համար/, Երևան 2007թ., 141էջ:
5. Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, Երևան 2011թ.,239էջ:
6. Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց , պրակ 1-ին, Երևան 2007թ.,199էջ:
7. << Քայլ առ քայլ>> ԲՀ, << Ծնողական կրթույթուն>>,ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ , unisef , Երևան 2005 թ.,425էջ :
8. << Քայլ առ քայլ>> ԲՀ, Երեխայակենտրոն դասասենյակների ստեղծումը, 5-6 տարեկանների համար, Քըրսթին Ա. Հանսեն, Ռոքսան Ք. Քաուֆման, Քեյք Բըրք ՈՒոլշ , Փամելա Ա. Քոգլին Բաց հասարակության ինստիտուտի համագործակցությամբ, 1997թ.,331էջ:
9. Երեխայակենտրոն նյութերի ստեղծումը մաթեմատիկայի և բնագիտության բնագավառում, Ջուդիթ Ռոթշիլդ Ստոլբերգ և Էլեն Ռ. Դանիելս, Մանկական ռեսուրսների միջազգային կենտրոն, Բաց հասարակության ինստիտուտի համագործակցությամբ, 1998թ., 205էջ:
10. Ծննդից մինչև 6 տարեկան երեխաներիկ զարգացման և կրթական չափորոշիչներ, ՀՀ կրթության և գիտության նախարարություն , , ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ unisef 2011թ.,182էջ:
11. Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում, Կրթական բարեփոխումների կենտրոն , Երևան 2007թ.,77էջ:
12. <<Երաժշտություն>> առարկայի չափորոշիչ և ծրագիր, Երևան 2007թ.,165էջ:
13. Ա.Լուսինյան, Կ.Ղազարյան << Երաժշտությունը մանկապարտեզում>>, <<Զանգակ 97>>, Երևան 2009թ.,218էջ:
14. Նախաշավիղ 7.2012թ. , 64 էջ:
15. Նախաշավիղ 2.2013թ. 64 էջ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Համալիր պարապմունքների օրինակներ:

Պարապմունքի թեման՝ **<<Ջուր>>**

Պարապմունքի ներածական մասում դաստիարակը պատմում է ջրի մասին, բերում է օրինակներ ջրի հատկությունների մասին , ինչպես նաև երեխաների աչքի առջև կատարում է փորձարկումներ: Ներգրավելով երեխաներին ջրի պատմությունների մեջ փորձում է հասկանալ, թե նրանք ի՞նչ գիտեն ջրի մասին: Արդյո՞ք նրանք կարողանում են հասկանալ մի շարք հասկացություններ, որոնք նպատակահարմար կլինեն քննարկել ջրի մասին պարապմունք անցկացնելիս: Մանկավարժը գրատախտակի վրա գծում է ԳՈՒՍ մոդելը և <<Ի՞նչ գիտենք >> հասկացության տակ գրառում է երեխաների արդեն իսկ ունեցած գիտելիքները ջրի մասին: Այնուհետև մանկավարժը խորացնում է զրույցը երեխաներին հետաքրքրող հարցերի շուրջ, ջրի մասին պատմելով նպաստում է ավելի գիտական և ավելի կարևոր հատկությունների բացահայտմանը : Երեխաները ներգրավվելով զրույցի մեջ ինքստինքյան տալիս են այն հարցերը, որոնք առավել հետաքրքիր են իրենց : Բոլոր հարցերը մանկավարժը գրառում է <<Ի՞նչ ենք ուզում իմանալ>> սյունյակում: Այնուհետև մանկավարժը հիմնվելով երեխաների հետաքրքրությունների և տրված բազմաթիվ հարցերի վրա, տալիս է շատ այլ տեղեկություններ՝ մատնանշելով երեխաների հարցերի պատասխանները: Երեխաների հետաքրքրությունները

բավարարելու նպատակով մանկավարժը թույլ է տալիս , որ երեխաները անձամբ կատարեն և դիտեն այն հետազոտությունները և ուսումնասիրությունները, որոնք բացահայտում են ջրի զարմանահրաշ աշխարհը: Երեխաները հետազոտում են ամանի մեջ լցրած ջրի գոլորշիացման առանձնահատկությունները տարբեր պայմաններում՝

1. ջեռոցի վրա,
2. արևի ճառագայթների տակ,
3. դրսում, բացօթյա, հետևելով ջրի անհետացման ընթացքին , երբ երեխաները ջրանկարներ են կերտում գրատախտակին կամ մայթի, հողի վրա:

Երեխաների <<Ի՞նչ կկատարվի ,եթե ջրի մեջ աղ ավելացնենք >> հարցի պատասխանը նրանք նույնպես ձեռք են բերում սեփական հետազոտության միջոցով: Նրանք տեղեկանում են ջրի այնպիսի հատկությունների մասին ինչպիսիք են՝ ջրի լուծելիությունը , ներծծումը և բնության մեջ նրա օգտագործման ձևերը:

Երեխաներին տրամադրելով համապատասխան դիդակտիկ պարագաներ՝ տարաներ, ձագարներ, գդալներ խողովակներ, մաղեր, սպունգներ թույլ է տրվում նրանց զգալու որպես փոքրիկ հայտնագործող-գիտնականներ, ինչն էլ նպաստում է նրանց ինքնուրույնությանը և ազատությանը, ինչպես նաև ինտելեկտուալ զարգացվածությանը:

Ձեռքբերելով բացմաթիվ գիտելիքներ մանկավարժը լրացնում է մոդելի <<Ի՞նչ սովորեցինք>> սյունակը , որտեղ պատասխաններն անհամեմատ շատ են քան <<Ի՞նչ գիտենք>> սյունակում:

Գիտեմ	ՈՒզում եմ իմանալ	Սովորեցի
Ջուրը լավ է լողանալու համար:	Ձեթն ու ջուրը խառնելիս ինչ կստացվի:	Ձեթն ու ջուրը խառնելիս ջեթը մնում է ջրի երեսին: Երեխաները սովորեցին՝ անլուծելիություն, խտություն, մածուցիկություն, հասկացությունները:
ջուրը գունավոր է:	Ինչու է թեյնիկից գոլորշի դուրս գալիս:	Ջուրը տաքանելիս այն փոխակերպվում է գոլորշու:

Ծովը ջրից է:	Ինչու է արևի տակ դրված թասի մեջ ջուրը տաքանում:	.Ջուրը կլանելով արևի ճառագայթները իր մեջ՝ տաքանում է:
Ջուրը պնդանում է :	Ինչու է ջուրը պակասում արևի տակ դրված թասից:	
Ջուրը համով է :	Ինչու ձմռանը բակի ծորակից ջուր չի գալիս:	Ջուրը տաքանալիս աստիճանաբար պակասում է:
Ջուրը ուտում են:	ինչու է թեյի մեջ շաքարը անհետանում :	Որովհետև ջուրը ունի սառչելու, պնդանալու հատկություն:
Ջրով ջրում են հողը:	Ինչու է թղթից նավակս գեղեցիկ լողում ջրի երեսին:	Որովհետև շաքարավազը ջրի հետ լուծելի է:
Ջրով ջրում են ծաղիկները :	Ինչու է գդալս սուզվում թեյիս մեջ:	Քանի որ նավակը թեթև է այն կանգնում է ջրի երեսին:
Ջուրը թեյ է:	Ինչու է անձև գալիս:	Քանի որ գդալը ծանր է այն սուզվում է թեյի մեջ:
Երկնքից ջուր է գալիս:	Ինչպես է առաջանում սառույցը:	Ջուրը գոլորշիանալիս բարձրանում է երկինք՝ ամպերց թափվում է ներգև անձրևի տեսքով:

Գուս մոդելով աշխատանքը տվեց իր ցանկալի արդյունքը:

Պարապմունքի թեման՝ << Խոհարարական հմտություններ >>

Նպատակը՝ Ծանոթացում սննդամթերքներին, բանջարեղեններին, խոհարարական պարագաներին, և ճաշի պատրաստման եղանակներին:

Ներածական մաս – մանկավարժը ժամանակի ընթացքում քայլ առ քայլ տալիս է երեխաներին գիտելիքներ սննդամթերքի պահպանման , պատրաստման, խոհարարական պարագաներից օգտվելու ձևերի մասին: Բացի դրանից մանկավարժը հիշեցնում է երեխաներին , որ պետք է լվանալ ձեռքերը և խալաթ հագնել և համոզվել, որ խոհանոցային սեղանը մաքուր է: Մանկավարժը աչքի տակ է դնում այն խոհանոցային պարագաները, որոնք պետք է օգտագործվեն: Հետո երեխաներին բաժանում է խմբերի:

Օգտագործելով ձնագնդի մեթոդը մանկավարժը բարձրաձայն առաջարկում է առաջադրանքը, երեխաները կատարում են և միաժամանակ տեղի է ունենում կարծիքների փոխանակում, որը բերում է լեզվական կարողությունների զարգացմանը, օրինակ ՝ << Դուք կեղևում եք խնձորները, -ասում է մանկավարժը, - երեխան հայտնում է իր կարծիքը , որ ավելի լավ է սկզբում գրտնակել խմորը , այնուհետև դարձյալ ձնագնդի մեթոդի կիրառմամբ երեխաները կատարում են ընտրություն բանջարեղենների միջև և սրելով հիշողությունը և ուշադրությունը, փորձում են կատարել բաղադրատումսում տրված առաջադրանքները: Խոհարարական փորձառության հասնելու համար շատ անհրաժեշտ է , որ երեխաները կարողանան մինչև բաղադրիչները համադրելը տեսնել, զգալ, հոտոտել, համտեսել բաղադրիչները, դարձյալ օգտագործելով վերը նշված մեթոդը օգնել երեխաներին հետազոտումից հետո քննարկել տվյալ բաղադրիչների ձևը, գույնը,

չափը, նմանություններն ու տարբերությունները, տանելով նրան , որպեսզի երեխաների քննարկումների ծավալը ավելի մեծանա և նրանք սկսեն իրար հետ խոսեն ավելի հարուստ բառապաշարով:

1. Ի՞նչ համ ուներ այս ուտելիքը:
2. Ք՞աղցր էր, թե՞ թթու:
3. Մածունի համը ջեմի համից տարբերվում է թ՞ե ոչ:
4. Ի՞նչի համն է քեզ դուր գալիս ելակի թ՞ե խնձորի:
5. Մանկավարժը հմտորեն օգտվելով ձնագնդի մեթոդից փորձում է երեխաներին պատմել նաև խոհարարություն հետ կապված քիմիական և ֆիզիկական երեևույթների մասին:
6. Ի՞նչ է պատահում, երբ խմորիչը լուծվում է շաքարի և ջրի մեջ:

Մանկավարժը ստեղծում է այնպիսի իրավիճակներ , որ մի երեխա անձամբ կատարելով այս առաջադրանքը բարձրաձայն պատմում է արածի մասին , իսկ մի այլ երեխա շարունակում է միտքը և պատմում թե՞ ինչ եղավ իրականում:

Այսպիսով, մտքերի և կարծիքների փոխանակմամբ երխաները ավարտում են խոհարարական կենտրոնում աշխատանքը անցնելով եզրափակիչ մասին, ևս մեկ անգամ ամփոփում են մտքերը՝ դարձնելով այն << մեծ ձնակույտ>> ,և երեխաներին հնարավորություն են տալիս համտեսելու իրենց պատրաստած ուտելիքը , գնահատելու այն հմտությունների շրջանակները, որը պետք է խոհարարական հմտություններ ձեռք բերելու համար:

Երեխաները մեծ բերկրանք են ապրում, երբ իրենք հայտնվում են մեծերի կարգավիճակում, պատրաստում են ուտեստներ, կազմակերպում հյուրասիրություններ, սպասքադրում սեղան: Այս ամենը հաշվի առնելով մանկավարժը պարապմունքի եզրափակիչ մասում անցկացնում է <<Ձեզ տեսնենք աղջիկներ>> մրցույթը խմբի աղջիկների մասնակցությամբ : Աղջիկները բաժանվում են խմբերի և յուրաքանչյուր խումբ ունենում է իր անվանումը: Մանկավարժի հրահանգավորմամբ թիմերը մրցակցային տարբերակով կատարում են այն առաջադրանքները , որոնք նախկինում սովորել են պարապմունքների ընթացքում:

1. Ո՞վ ավելի արագ և գեղեցիկ կսպասքադրի սեղանը:Նախորոք դրված սեղանների վրա երեխաները փռում են սփռոցը և համապատասխան սպսքը տեղավորում սեղանի վրա:
2. Ո՞վ առաջինը կկեղևազրկի ձուն և կկտրատի մանր աղցանի համար:
3. Ո՞վ ավելի արագ կթվարկի այն խոհանոցային պարագաները , որոնք դրված են խոհանոցի սեղանի վրա:
4. Ո՞վ ավելի արագ և ճիշտ կպատասխանի թե ինչպես են պատրաստում հայկական տոլման, թանապուրը և բանջարեղենով ապուրը: Երեխաները ոգևորությամբ կատարում են իրենց առաջադրանքները ,միավորներ վաստակում և ամբողջ կյանքում հիշում իրենց ձեռքերով իսկ պատրաստած աղցանները և այն համեղ ուտելիքների պատմությունը , որ նրանք պատմել են մրցույթի ժամանակ:

Մանկավարժը ամփոփում է պարապմունքը, գովաբանում երեխաներին հատկապես աղջիկներին և ասում, որ նրանք հետագայում կդառնան գեղեցիկ խոհարարուհիներ: Պարապմունքի թեման ՝ <<Նկարներ սերմերով>



Նպատակը՝երեխաների ստեղծագործականության զարգացում, հետաքրքրասիրության, երևակայելու, նախաձեռնելու ցանկություն առաջացում: Երեխային մեծ բավականություն է պատճառում շոշափել առարկաները և ուսումնասիրել դրանց կառուցվածքն ու չափսերը: Ստեղծելով սերմերով նկարը երեխան հնարավորություն է ստանում շոշափելիքի օգնությամբ զգալու երկչափ

տարածությունը: Զգայարանների միջոցով հետազոտումը էական դեր է խաղում փոքրիկի ֆիզիկական և մտավոր զարգացման համար:

Դիդակտիկ պարագաներ և նյութեր

Փոքրիկ անոթով և պլաստմասայե բաժակով ջուր, առանձին թասեր սերմերի համար, զանազան սերմեր ՝ ձմերուկի, դդումի, արևածաղկի , մրգերի, սպիտակ սոսինձ, վրձին, թերթեր, հաստ թուղթ:

Նախապատրաստում

Մանկավարժը թերթը փռում է սեղանի կամ հատակի վրա: Առանձին թասերի մեջ լցնում է ձմերուկի, դդումի, արևածաղկի և մրգերի սերմերը: Փոքրիկ անոթի կամ պլաստմասայե բաժակի մեջ մանկավարժը ջրիկացնում է սպիտակ սոսինձը: Յուրաքանչյուր երեխայի տալիս է հաստ թղթի մի կտոր ու մի վրձին:

Ընթացքը

Երեխաները սոսնձում են այն հատվածը, որտեղ նրանք ցանկանում է կպցնել սերմերը: Ցանկալի է փոքրիկներին օգնել այս գործում: Մանկավարժը ազատ ընտրության հնարավորություն է տալիս երխային, որպեսզի նա ինքը որոշի թե՞ որ սերմերն է նա ցանկանում օգտագործել և ինչպես: Երեխան կարող է սերմերը անձրևի նման շաղ տալ սոսնձված հատվածի վրա: Այնուհետև սոսինձը անհրաժեշտ է թողնել որպեսզի չորանա : Երեխաները ցանկության դեպքում կարող են խմբով աշխատել մեկ մեծ նկարի վրա: Քանի որ արդյունավետ է աշխատել ենթախմբերով, որը հնարավորություն է տալիս երեխաներին համագործակցել, փոխանակել իրենց գիտելիքներն ու փորձը և ձգտել հասնելու ընդհանուր նպատակին, մանկավարժը երեխաներին առաջարկում է բաժանվել խմբերի : Ամեն մի ենթախմբին տրվում է առաջադրանք , որ նրանք պատրաստեն այնպիսի պատկերներ , որը պետք է օգտագործվի կայանալիք միջոցառման դեկորատիվ ձևավորման համար : Նախորոք ընտրված մոդելները մանկավարժը բաժանում է երեխաներին, օգտագործելով զրույցի մեթոդը տալիս է տեղեկություններ երեխաներրն թե՞ բեմի , որ հատվածում , ինչպիսի ձևավորման աշխատանքներ պետք է կատարի :Երեխաները ըստ նմուշի սկսում են աշխատել և ստեղծում են դեկորատիվ կիրառական արվեստի նմուշներ: Երեխանեի ձեռքով պատրաստված ջահերը ՝սերմերի տեսքով, պատերի ձևավորումները՝ սերմերով պատրաստված նկարներով, շատ գեղեցիկ և հաճելի

միջավայր է ստեղծում երեխաների համար և նրանք մեծ բավականություն են ստանում իրենց կատարած աշխատանքից:

Այսպիսով, սերմերով նկար պատարաստելու ընթացքում օգտագործվում են բազմաթիվ փոխներգործուն մեթոդներ, որոնք տպաստում են երեխաների ինտելեկտուալ և ստեղծագործական ունակությունների զարգացմանը: